ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

27 ՓԵՏՐՎԱՐԻ
2026 թ.
№ 3 (1158)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՊՄՀ ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ դասախոսներ,
ուսանողներ, գործընկերներ

Մայրենի լեզվի օրը կարևոր առիթ է մեկ անգամ ևս արժևորելու այն հոգևոր ու մշակութային հարստությունը, որը դարեր շարունակ պահպանել է մեր ազգային ինքնությունը, ձևավորել մեր մտածողությունը և միավորել մեզ որպես ժողովուրդ:

Հայերենը պարզապես հաղորդակցության միջոց չէ: Այն մեր պատմությունն է, մեր հիշողությունը, մեր մշակութային կոդը և ապագայի նկատմամբ մեր հավատը: Լեզվի միջոցով է փոխանցվում արժեքը, ձևավորվում՝ աշխարհընկալումը, կերտվում՝ քաղաքացիական ու ազգային գիտակցությունը:

Մեր համալսարանի անունը կրող մեծ լուսավորիչն ու մանկավարժը՝ Խաչատուր Աբովյանը, մայրենի լեզվին վերապահում էր կրթական ու ազգային զարթոնքի առանցքային դեր: Նրա համոզմամբ՝ կրթությունը պետք է հենվի ժողովրդի կենդանի լեզվի վրա: Այսօր մենք շարունակելով այդ ավանդույթը՝ ոչ միայն ուսուցանում ենք լեզու, այլ ձևավորում ենք ուսուցիչներ, ովքեր իրենց մասնագիտական գործունեությամբ դառնալու են լեզվի պահպանողն ու զարգացնողը:

Միևնույն ժամանակ, Մայրենի լեզվի օրը նաև հիշեցնում է, որ յուրաքանչյուր լեզու մարդկության մշակութային ժառանգության անբաժանելի մասն է: Լեզուների բազմազանությունը հարստություն է, որը հնարավորություն է տալիս ժողովուրդներին ճանաչել միմյանց, հարգել միմյանց ինքնությունն ու մշակույթը, կառուցել փոխըմբռնման և խաղաղ համակեցության կամուրջներ: Մշակութային բազմազանության ընդունումն ու արժևորումը կրթության կարևոր առաքելություններից է, իսկ ուսուցիչը այդ գործընթացի առանցքային դերակատարն է:

Մանկավարժական համալսարանի առաքելությունն այս համատեքստում առավել պատասխանատու է. այստեղ ձևավորվում է այն մասնագետը, ով իր խոսքի մշակույթով, իր լեզվամտածողությամբ և իր արժեքային համակարգով կազդի ապագա սերունդների վրա: Ուստի մայրենի լեզվի հանդեպ հարգանքը պետք է զուգորդվի նաև այլ լեզուների և մշակույթների հանդեպ հանդուրժողականությամբ:

Թող յուրաքանչյուր բառ, որ հնչում է մեր լսարաններում, արտահայտի սեր և պատասխանատվություն մայրենիի հանդեպ, և միաժամանակ՝ հարգանք մարդկության բազմազան մշակութային ժառանգության նկատմամբ:

Շնորհավորում եմ բոլորիս Մայրենի լեզվի օրվա առթիվ: Թող հայերենը մշտապես մնա մեր ինքնության ամուր հիմքը, իսկ լեզուների բազմազանության հանդեպ հարգանքը՝ մեր կրթական և քաղաքակրթական հասունության չափանիշը:

Գիտական խորհրդի նիստում

Փետրվարի 26-ի ՀՊՄՀ Գիտական խորհրդի նիստը մեկնարկեց համալսարանի հոբելյարներին շնորհավորելով: ՀՊՄՀ ռեկտորը շնորհավորեց և շնորհակալագրեր հանձնեց Կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր, Արվեստի վաստակավոր գործիչ Կարեն Աղամյանին, Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ Աշոտ Եսայանին, Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենը Իզաբելլա Զոհրաբյանին, գնահատեց նրանց տարիների վաստակը՝ մաղթելով առողջություն և երկարամյա աշխատանք՝ ի նպաստ երիտասարդ սերնդի և մեր երկրի:

Օրակարգում երկու դեկանի ընտրությունների հարցն էր. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու համար դիմած միակ թեկնածուն դեկանի պաշտոնակատար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արթուր Թադևոսյանն էր, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի համար դիմել էին դեկանի պաշտոնակատար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրինե Շողերյանը և Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման ամբիոնի պրոֆեսոր, կենսաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Սադոյանը:

Նրանք ներկայացրին ֆակուլտետի զարգացման իրենց տեսլականները, հանգամանորեն խոսեցին տարբեր ուղղություններով աշխատանքների կազմակերպման ծրագրերի ու ձևաչափերի մասին՝ շեշտը դնելով նորարարական տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառման վրա:

Փակ գաղտնի քվեարկման արդյունքում Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի դեկանի ընտրվեց Արթուր Թադևոսյանը, իսկ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան՝ Սիրինե Շողերյանը:

Օրակարգի երկրորդ հարցով լսեցին համալսարանի ՈՒԽ նախագահ Պարույր Գալստյանի զեկուցումը կատարած աշխատանքների և առաջիկա ծրագրերի մասին: Կառույցի ղեկավարը ներկայացրեց՝ տարին արդյունավետ էր, լեցուն հետաքրքիր մշակութային-կրթական, մարզական ու կամավորական աշխատանքի ծրագրերի իրականացմամբ. 631 ծրագիր, որին մասնակցել է 7414 ուսանող:

Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց նորընտիր դեկաններին, իսկ ուսանողական կառույցի ղեկավարին մաղթեց ակտիվ համագործակցային աշխատանք:

Խորհրդի նիստն անդրադարձավ այլ հարցերի ևս՝ հաստատեց Գիտության հարցերով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսությունների թեմաները, ինչպես նաև Ուսումնական գործընթացների պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանի ներկայացրած կանոնակարգի փոփոխությունները:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհակալագիր հանձնեց Գիտական քարտուղարի պաշտոնում արդյունավետ աշխատանք իրականացրած պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանին՝ միաժամանակ ընդգծելով Գիտական խորհրդի անդամների աշխատանքի ու վաստակի կարևորությունը:

ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԽԵԼԱՑԻ ԼՍԱՐԱՆՆԵՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆՈՒՄ

Հայկական բուհերում կրթության արդիականացման համատեքստում Erasmus+ eCAMPUS նախագծով փետրվարի 24-ին Մանկավարժական համալսարանում բացվեց Հիբրիդային ուսուցման երկու խելացի լսարան: Նոր խելացի լսարանները հնարավորություն կընձեռեն միաժամանակ ապահովել ֆիզիկական և հեռավար ուսուցում՝ ուսանողների ու դասախոսների համար՝ մոտեցնելով ներառական և տեխնոլոգիահեն կրթությունը:

eCAMPUS նախագիծը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից՝ Erasmus+ ծրագրի շրջանակներում:

Պաշտոնական բացմանը ներկա էին ՀՊՄՀ ղեկավար կազմը, eCAMPUS ծրագրի համակարգողները, առցանց ձևաչափով՝ կոնսորցիումի անդամ համալսարանների ներկայացուցիչները:

Արարողությունը բացեց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակաատար Լիլիթ Մկրտչյանը:

«Ժամանակակից կրթության մեջ մարդուն անհրաժեշտ է համապատասխան իմացություն և հմտություն: Ժամանակակից աշխարհում կրթության որակն ապահովելու և առաջ գնալու համար շատ կարևոր է կրթության միջավայրի ապահովումը: Եվ ահա մենք նման գեղեցիկ կրթական միջավայր ստեղծելու հնարավորություն ունեցանք, որը մեր ուսանողների համար պետք է դառնա նոր հմտություններ զարգացնելու և ժամանակակից կրթական համակարգի պահանջին համապատասխան կրթություն ստանալու»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Ծրագրի իրականացման համար նա շնորհակալություն հայտնեց հայ և միջազգային բոլոր գործընկերներին ու աջակիցներին:

Հիբրիդային խելացի լսարանի բացման առթիվ շնորհավորեց ԵՊՀ Որակի ապահովման կենտրոնի ղեկավար, eCAMPUS-ի նախագծի համակարգող Արմեն Բուդաղյանը:

«Ժամանակակից դասական կահավորված այս լսարանը միայն տեխնիկական լուծում չէ, այլ ժամանակակից կրթության պարադիգմայի կարևոր մաս է և հնարավորություն ունեցանք, մեր ուսանողների համար նոր հմտություններ զարգացնելու և ժամանակակից կրթության համակարգի պահանջներին համապատասխան կրթություն ստանալու հնարավորություն,- ասաց Արմեն Բուդաղյանը: -Լսարանը կահավորված է ինտերակտիվ էկրանով, ժամանակակից թվային աուդիո, վիդեո համակարգերով, այլ թվային լուծումներով, որոնք հնարավոր են դարձնում հեռավար ուսանողների ներկայությունն այս լսարանում, դասախոսների համար ևս հնարավորություն է ստեղծվում կազմակերպել ուսումնառությունը գրեթե բոլոր ձևերով՝ առդեմ, հեռավար, հիբրիդային և խառը եղանակներով՝ ուսուցումը դարձնելով և՛ գրավիչ, և՛ ժամանակակից պահանջներին համապատասխան»:

ՀՊՄՀ Միջազգային համագործակցության և ծրագրային կառավարման կենտրոնի ղեկավար Գոհարիկ Տիգրանյանն ընդգծեց, որ կարողությունների զարգացման այս ծրագիրը Հայաստանի նորարարական կրթության առհավատչյան է, որ նախագիծը բացառիկ հնարավորություն է տալիս շփվելու միջազգային գործընկերների հետ և ներկայացնել առաջատար կրթական մոդելներ մեր համալսարանում:

ՀՊՄՀ Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը հանդես եկավ «Տեխնոլոգիաների ինտեգրումը ուսուցիչների վերապատրաստման ծրագրերում» թեմայով զեկուցումով:

«Սա ամենահետաքրքիր և ամենաշահագրգիռ մոտեցում ցուցաբերող նախագծերից մեկն էր, որտեղ մենք տեսանք մեծ պրոֆեսիոնալիզմ: Այս ծրագիրն ունի նախագծի շրջանակներում մշակած շատ կարևոր հստակ հարացույց՝ ապահովելու բուհական մանկավարժների, բուհական պրոֆեսորադասախոսական կազմի թվային վերազինումն ու թվային զարգացումը՝ ներառելով տարբեր սերունդներ: Փաստաթղթերում հաշվի են առնված բոլոր այս սերունդների և՛ կարիքները, և պատրաստվածության մակարդակը, և՛ կոնկրետ մասնակցությունը կրթական գործընթացում»,-ասաց Օտար լեզուների ֆակուլտետի դեկան Տիգրան Միքայելյանը:

ՄԵԿՆԱՐԿԵՑ 30 ԿՐԵԴԻՏԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼԸ

Մանկավարժական համալսարանում փետրվարի 23-ին տրվեց «Մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող 30 կրեդիտի միջոցով մանկավարժի հավաստագրման» կրթական ծրագրի դասընթացների նոր մեկնարկը: Չորսամսյա ծրագիրը կիրականացվի 15 առարկայի գծով, կվերապատրաստվի 49 մասնակից:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ողջունեց գործընկերներին և փաստեց՝ ժամանակակից հարափոփոխ աշխարհում ամենակարևոր դերը ուսուցչինն է: Նա ոչ միայն գիտելիք, հմտություն, իմացություն, այլև արժեքային համակարգ փոխանցողն է և դաստիարակողը:

«Անցել են ժամանակները, երբ մեկ անգամ կրթվելով մենք կարող էինք մասնագետ դառնալ. մենք անդադար կարիք ունենք սովորելու, ուսումնասիրելու, վերադիրքավորվելու, ճանաչելու մեր աշակերտներին ու նրանց կարիքները, նրանց թևեր տալու»,-ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ հույս հայտնելով, որ այդ ամենը Մանկավարժական համալսարանում

ձեռք կբերեն: Նա վստահեցրեց, որ համալսարանի դռները մշտապես բաց են լինելու նրանց առաջ, իսկ 30 կրեդիտի հավաստագիրը հնարավորություն է տալու շարունակելու գործունեությունը դպրոցում:

«Ձեր գործը ամենապատասխանատուն է, ուսուցիչն ինձ համար ամենակարևոր մարդն է, որը կարող է կառուցել, կարող է և քանդել: Դպրոցականները հում աղյուս են և ձեր ձեռքերի մեջ պիտի ձև ստանան: Նրանք մեր ապագան են լինելու, և շատ կարևոր է, թե ինչ ձև կտաք նրանց: Այդ բարձր պատասխանատվությամբ ու իմացությամբ էլ պետք է ձեզնից յուրաքանչյուրն իր ճանապարհն անցնի: Ուսուցչի դերի ու կերպարի թերարժևորման մասին թյուր կարծիք կա. այդ մասին վկայում է այն փաստը, որ դուք ուզում եք մտնել դպրոց և ուսուցիչ աշխատել»,-ասաց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը՝ վստահեցնելով՝ ուսուցիչը կարևոր է, գնահատված է և իր արժանապատիվ դերն ունի հասարակության մեջ՝ կախված մեզնից յուրաքանչյուրից՝ թե ինչպիսի դասավանդողներ կլինենք:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը մաղթեց արդյունավետ վերապատրաստում և հորդորեց՝ համալսարանի մեծ ռեսուրսից կարողացեք վերցնել առավելագույնը:

«Այն գնահատականը, որ դուք ուզում եք ստանալ, արդեն ճանապարհին եք: Հենց ուսուցիչ կոչվեցիք՝ արդեն այդ գնահատականի կրողն եք դառնալու և այդ առաքելություն իրականացնողը»,- ներկաներին դիմեց ՀՊՄՀ ուսումնական գործընթացների պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը՝ ողջունելով ուսուցիչ աշխատելու նրանց ցանկությունը:

Ի դեպ, վերապատրաստումների 8-րդ շրջափուլի ավարտին կունենանք 30 կրեդիտի հավաստագրով Մանկավարժական համալսարանն ավարտած շուրջ 400 շահառու:

Պրոռեկտորը փաստեց՝ նրանց մեծ մասն արդեն դպրոցներում դասավանդում է, մեծ ոգևորությամբ աշխատում, և հույս հայտնեց, որ այս խումբն էլ կգնա այդ ճանապարհով: Վստահեցրեց՝ այս համագործակցությունը չի ավարտվում սոսկ 30 կրեդիտի հավաստագրերի ստացմամբ, առաջիկայում համագործակցության տարբեր ձևաչափեր կլինեն:

Պրոռեկտորը տեղեկացրեց՝ հասարակագիտություն առարկայից 30 կրեդիտի համար դիմել է նաև ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Մանկավարժական համալսարանը եղել է և կմնա դպրոցի կողքին՝ ամփոփեց պրոռեկտորը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Սեմինարը վարում էր կրթության փորձագետը

Մանկավարաժական համալսարանում կայացավ «Կրթության կազմակերպման առանցքային արդյունավետության ցուցանիշերը» թեմայով սեմինար, որը վարում էր կրթության միջազգային փորձագետ, մեթոդիստ Սեդա Քոչարյանը:

Բանախոսը նախ ներկայացրեց ի՞նչ, ինչպե՞ս, ինչու՞ հարցադրմամբ Սայմոն Սընեքի «Ոսկե շրջանակի» տեսությունը՝ համաձայն որի պետք է իմանալ՝ «ինչու»-ն նպատակն է, առաքելությունը կամ հավատամքը և պատճառը՝ ինչու կազմակերպությունը գոյություն ունի և պետք է որևէ մեկին հետաքրքրի:

Սեդա Քոչարյանը հանդիպման ընթացքում հետաքրքրվեց ներկաներից՝ ինչպե՞ս, ի՞նչ գործիքակազմի կամ մոտեցման միջոցով են չափում իրենց աշխատանքի հաջողությունը, ապա ընդգծեց՝ այն, ինչ հնարավոր չէ չափել, հնարավոր չէ կառավարել:

Կրթության միջազգային փորձագետը ներկայացրեց նաև KPI-ի կամ գնահատման կամ կատարողական առանցքային ցուցանիշի ռազմավարությունը, նշելով, որ այն պետք է լինի ռազմավարական, գործնական և չափելի:

Սեմինարին հաջորդեց գործնական աշխատանք, որի նպատակն էր պարզել բուհում KPI-ի կիրառման ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները, թե ինչ գիտելիքների կարիք և ինչ ռիսկեր կան:

Մեթ Լանգդոնի դասախոսությունը

Մանկավարժական համալսարանում դասախոսությամբ հանդես եկավ «Հերոսական երևակայություն ծրագիր» (Heroic Imagination Project, HIP) կազմակերպության գործադիր տնօրեն Մեթ Լանգդոնը:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց դասախոսությունը՝ արժեբանության, պատասխանատվության ստանձման տեսանկյունից՝ նկատելով՝ մեր երկրում կրթական բարեփոխումների շրջանակում ևս կարևորվում է կրթության մեջ արժեհամակարգի ձևավորումը: Մեթ Լանգդոնը բուհում էր «Հերոսական երևակայություն ծրագիր» կազմակերպության, ՀՊՄՀ-ի և «Հանրային լրագրության ակումբ» հասարակական կազմակերպության համագործակցության շրջանակներում, որի համահիմնադիր Մանկավարժականի շրջանավարտ Սեդա Մուրադյանը կարևոր և արժեքավոր համարեց այն, որ բուհը բաց է ինովացիոն գործընթացների համար՝ ներկայացնելով ծրագրի նպատակները:

Սեդա Մուրադյանը կարծում է, որ որպես պետություն, հասարակություն մենք ամենօրյա հերոսների, նրանց ճանաչելու, գնահատելու, վերաիմաստավորելու կարիքն ունենք. մանկավարժը ևս հերոս է, և հերոս են բոլոր նրանք, ովքեր դժվարին պայմաններում շարունակում են հաավատարիմ մնալ իրենց առաքելությանը: Բանախոս Մեթ Լանգդոնը դասախոսությանը ներկայացրեց նախագծի նախապատմությունը, ապա ներկայացրեց իր դասախոսությունը՝ «Ո՞վ է հերոսը» հարցադրմամբ, խոսեց «հերոս» հասկացության մասին տարբեր սահմանումներով ու մեկնաբանություններով:

Մեթ Լանգդոնի նշած հերոսն առանձնանում է մի քանի գծերով՝ անտարբեր չէ, նախաձեռնող է, կողմնորոշվում է բարին կատարելու առաջնորդությամբ և այդ քայլն իրականացնում անկախ ռիսկերից և որոշակի զոհողություններից: Հանդիպմանը ներկայացվեցին բարոյական խիզախության և քաղաքացիական պատասխանատվության հոգեբանական հիմքերը, ամենօրյա «հերոսության» գաղափարը՝ որպես մասնակցության և քննադատական մտածողության մշակույթ, սոցիալական իրավիճակներում պասիվության, չմիջամտելու հոգեբանական մեխանիզմները և դրանց հաղթահարման գործիքները:

Մեթ Լանգդոնը նշեց՝ իրենց նպատակը հերոսի հարացույցի տարածումն է. այդ նպատակով ստեղծվել է նաև փորձագիտական խումբ՝ հերոսական գործունեությունը դասավանդելու առաքելությամբ, ներկայացվել է մեթոդաբանություն, ինչը կարող է ներդրվել նաև կրթական համակարգում:

Փետրվարի 18-ին Մանկավարժական համալսարանում Մեթ Լանգդոնը դասախոսությամբ հանդես եկավ նաև ուսուցիչների համար:

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Օտար լեզուների ֆակուլտետում փետրվարի 19-ին և 20-ին կազմակերպվել էին կլոր սեղան-քննարկումներ՝ Ռոմանագերմանական լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և անգլիական բաժնի մագիստրատուրայի կրթական աստիճանի ուսանողների հետ: Քննարկման առարկա էր դարձել «Վիշեգրադ» հիմնադրամի ֆինանսավորմամբ մշակված ընթերցանության և ճանաչողական զարգացման փոխկապակցված դասավանդման և յուրացման վերաբերյալ ձեռնարկը:

Քննարկումների ընթացքում ՀՊՄՀ դասախոսական թիմը, ինչպես նաև ՀՊՄՀ հենակետային վարժարանի անգլերենի ուսուցիչները և աշակերտները ներկայացրին իրենց փորձառությունն ու տպավորությունները:

«Օտար լեզվով ընթերցանության հմտությունների զարգացման միջամտություն» (IDEREC) ձեռնարկը միջազգային գիտահետազոտական աշխատանքի արդյունք է, որն ուղղված է օտար լեզվի (անգլերեն և գերմաներեն) ուսուցման գործընթացում ընթերցանության հմտությունների բարելավմանը: Այն նախատեսված է A2 մակարդակի սովորողների համար և հիմնված է կիրառական լեզվաբանության, դիդակտիկայի և հոգեբանության ժամանակակից ձեռքբերումների վրա:

Ձեռնարկի բովանդակության մեջ զետեղված են Տեսական հիմքեր Ճանաչողական գործոններ, Մեթոդական միջամտությունը և Գործնական կիրառություն բաժինները:

Գրքի առանցքային առավելությունները շատ են: Ձեռնարկը ոչ միայն ուսումնական նյութ է, այլ համապարփակ մեթոդական ուղեցույց, որը կամրջում է տեսական հետազոտությունը և դասարանային պրակտիկան՝ նպատակ ունենալով բարձրացնել օտար լեզվով ընթերցանության որակը թվային և տեղեկատվական դարաշրջանում:

Վերապատրաստումներ Հենակետային վարժարանում

ՀՊՄՀ Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի ուսուցիչների համար ամենշաբաթյա վերապատրաստումներ կանցկացնի միջազգային փորձագետ, մեթոդիստ Սեդա Քոչարյանը:

Նպատակը մեթոդական աջակցությունն է. հանդիպման առաջին օրը կատարվեց վարժարանի կարիքների գնահատում՝ ինքնաճանաչումից զարգացում, ինչին հաջորդեց խմբային աշխատանք:

Բանախոսը վստահեցրեց, որ համատեղ աշխատանքի շնորհիվ կհասնեն հաջողությունների և կձևավորեն աշակերտ, որը, բախվելով աշխարհի մարտահրավերներին, պատրաստ կլինի լուծումներ գտնել:

Վերապատրաստման ծրագիր դպրոցների տնօրենների համար

Մանկավարժան համալսարանում մեկնարկեց հանրակրթական դպրոցների տնօրենների և կառավարչական թիմերի անդամների համար նախատեսված «Կրթության նորարար կառավարում և կազմակերպում» թեմայով վերապատրաստման ծրագիրը:Այն միտված է նորարար կառավարման մշակույթի ձևավորմանը, տվյալահեն որոշումների կայացմանը, թիմային առաջնորդության զարգացմանը, կրթության որակի շարունակական բարելավմանը:

Ծրագրին մասնակցում է 45 տնօրեն:

Վերապատրաստմանը մասնակցած ղեկավարները կկարողանան իրենց դպրոցներում ներդնել ժամանակակից կառավարման գործիքներ, մշակել զարգացման ռազմավարություն և ձևավորել ստեղծարար կրթական միջավայր:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ողջունեց մասնակիցներին և մաղթեց արդյունավետ աշխատանք:

Առաջնորդության ժամանակակից տեսություններ, կառավարման մոդելներ և կարիքների վերլուծություն, որակի կառավարում և գնահատման չափանիշներ, աշխատանք կրթության շահառուների հետ, նորարարությունների ներդրում, փոփոխությունների կառավարում և դիմադրության հաղթահարում. 6-շաբաթյա վերապատրաստումներն անցկացնելու է միջազգային փորձագետ, մեթոդիստ Սեդա Քոչարյանը: «Առաջնորդության տեսություններ և հիմունքներ. կառավարչից դեպի ճարտարապետ» թեմայով առաջին մոդուլին բանախոսը ներկայացրեց տրանսֆորմացիոն՝ վերափոխվող առաջնորդությունը՝ որպես ոգեշնչող տեսլականի ձևավորում: Ինչպես նշեց նա՝ մոդելը կենտրոնանում է ոչ թե հրամանների, այլ ընդհանուր տեսլականի վրա, իսկ առաջնորդը մոտիվացնում է թիմին՝ դառնալով օրինակելի կերպար: «Արդյունավետ առաջնորդը նա է, ով կարողանում է փոխել իր կառավարման մեթոդները՝ կախված այն բանից, թե ում է առաջնորդում և ինչպիսի իրավիճակում: Իրավիճակային առաջնորդությունը կառավարման մոդել է, որի հիմքում ընկած է մեկ պարզ գաղափար. չկա առաջնորդության մեկ «լավագույն» ոճ»,- ներկայացնելով երկրորդ մոդելը՝ նշեց Սեդա Քոչարյանը:

Բանախոսը ներկայացրեց նաև հաջորդ՝ սպասավոր առաջնորդության մոդելն ու նկատեց՝ բուրգը շրջված է, իսկ տնօրենի հիմնական գործը ոչ թե վերահսկելն է, այլ ուսուցիչների և աշակերտների համար խոչընդոտներ վերացնելը:

Վերապատրաստման տեսական մասին հաջորդեց գործնական աշխատանք:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

ԳԼՈՒԽ ԳԼԽԻ

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴՊՐՈՑՈՒՄ

Մանկավարժական համալսարանում մտքերի և փորձի փոխանակման «Գլուխ գլխի» խորագրով համագործակցության հարթակի անդրանիկ հանդիպումն էր: ՀՊՄՀ և ԿԳՄՍ նախարարության համագործակցությամբ ստեղծված նոր ձևաչափով հարթակին մասնակցում էին մարզային դպրոցների տնօրեններ, կրթության տեսչական մարմնի ղեկավարներ, կրթության անկախ փորձագետներ, կրթական նորարարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոսներ:

Միավորել կրթության ոլորտի մասնագետներին՝ համատեղ մտածելու, քննարկելու, զարգանալու, ապահովելու տնօրենների և մանկավարժների մասնագիտական երկխոսությունը, փորձի փոխանակումն ու կրթական նորարարությունների տարածումը՝ ահա նորաստեղծ հարթակի նպատակը:

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կարևորեց նախաձեռնությունը և վստահեցրեց՝ ամենամսյա հանդիպումները կնպաստեն դպրոցբուհ կապի ամրապնդմանը, հանրակրթության ոլորտում առկա խնդիրների վերհանմանը, դրանց լուծմանը և հաջողված փորձի փոխանակմանը:

Լիլիթ Մկրտչյանը լիահույս է՝ դպրոցների տնօրենները նման հարթակի կարիք ունեն, հետևաբար այս նախաձեռնությունը կխթանի կրթության գործընթացի բոլոր մասնակիցների միջև համագործակցությունը, առաջադեմ գաղափարների և հաջողված փորձի ներկայացումն ու քննարկման արդյունքում կբացահայտի հիմնախնդիրները և ժամանակի մարտահրավերներին դիմակայելու լուծումներ կառաջադրի:

Օրվա բանախոսներն էին Աբովյանի N2 հիմնական դպրոցի տնօրեն Արթուր Տաշչյանն ու կրթության միջազգային փորձագետ, պատմաբան-մանկավարժ, մեթոդիստ Սեդա Քոչարյանը, թեման՝ «Կրթական նորարարությունները ժամանակակից դպրոցում»:

Արթուր Տաշչյանը իր ղեկավարած դպրոցի օրինակով գործընկերներին ներկայացրեց իրենց հաջողությունները ու նորարական կրթությանը միտված քայլերը, որի շնորհիվ դպրոցում ձևավորվել է նոր մշակույթ և միջավայր, իսկ Սեդա Քոչարյանը հիմնավորեց, թե ինչու չպետք է հանձնվել առաջին իսկ դժվարության ժամանակ և թե ինչպես է հնարավոր փոխել դպրոցական մշակույթը:

Տնօրենների աշխատանքների կազմակերպման, ոլորտում անհրաժեշտ փոփոխությունների մասին խոսեց Կրթության տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանը:

Անդրանիկ հանդիպումն ամփոփվեց հարց ու պատասխանով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ԹՈՒՄԱՆՅԱՆՈՎ ՄԵՆՔ ԿԱՆՔ, ԱՌԱՆՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԵՆՔ ՉԿԱՆՔ».

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կա Մեծարենց, կա Տերյան,-և բազում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության.

Այս տողերով Գիրք նվիրելու օրվա հանդիպումը բացեց ՀՊՄՀ գիտական գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը: Նա կարևորեց օրվա խորհուրդը՝ Հովհաննես Թումանյանի ստեղծագործական աշխարհի և առհասարակ գրքի վերաիմաստավորման տեսանկյունից, նաև փաստեց՝ օրվա ընթացքում 350 գիրք է նվիրել ուսանողներին, դասախոսներին, ընթերցողներին. «Մեզանից յուրաքանչյուրը փոքր տարիքից սկսած կարդում և ապրում է Թումանյանով: Եվ հրաշալի նախաձեռնություն է այն, որ Թումանյանի ծննդյան օրը մեզանում նշվում է որպես գիրք նվիրելու օր»:

Համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց ներկաներին խորհրդանշական տոնի կապակցությամբ. «Շատ կարևոր է Թումանյանի ծննդյան օրը դարձնել գիրք նվիրելու տոն, համահայկական տոն, գիրք, որը մեր առջև բացում է աշխարհի դռները, մեր հոգում լույս է ավելացնում, մեզ մտածել, երազել, ստեղծագործել է սովորեցնում, և մարդ որքան շատ է կարդում, այնքան կյանքի շատ շերտեր է բացում»: Լիլիթ Մկրտչյանն իր հեղինակած գիրքը նվիրեց գրադարանին՝ մաղթելով, որ այս օրը բոլորի սրտերին, հոգուն ու մտքին թևեր տա՝ թևածելու և առաջ գնալու:

Գիտական գրադարանի տնօրենն էլ իր հերթին իր հեղինակած և խմբագրած գրքերից նվիրեց ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարին:

ՀՊՄՀ գրադարանի և թանգարանի նախաձեռնությամբ կազմակերպված համատեղ միջոցառմանը մասնակցում էին բուհի ղեկավար կազմը, պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողներ և Աբովյանի անվան հմ. 2 հիմնական դպրոցի մի խումբ աշակերտներ, նաև հյուրեր՝ պատմական գիտությունների թեկնածու Միեր Հարությունյանը, պատմական գիտությունների դոկտոր Վարդան Գրիգորյանի տղան՝ Ուզբեկստանում Հայաստանի նախկին դեսպան, պատմաբան Արամ Գրիգորյանը:

Գրադարանում բացվել էր եզակի նվիրատվությունների ցուցասրահ՝ 18-19-րդ դարերի գրքերով ու հայտնի մտավորականների նվիրական գրառումներով:

«Այս գրքերը եզակի պատմական արժեք ունեն, որովհետև հեղինակի, գիրք ստացողի և ժամանակի մասին են խոսում: Այս ամենը արվեստ է՝ գեղեցիկ նվիրագրերով»,-ասաց հանդիսությունը վարող Տիգրան Պետրոսյանցը:

Գիրք նվիրելու օրվա խորհուրդը յուրովի բացահայտեցին պրոֆեսորներ Ալիտա Դոուխանյանը, Աիդա Թոփուզյանը և Աշոտ Գալստյանը:

«Գիրքը եղել է, կա և լինելու է կրթված մարդու մշտական ուղեկիցը: Տեխնոլոգիաները առաջ են գնում, բայց ես իմ ուսանողներին հորդորում եմ գիրք կարդալ: Բոլորդ գիտեք՝ հայ գրողների մեջ ամենահարուստ գրադարանը ունեցել է Հովհաննես Թումանյանը»: Ես հիմա էլ ամեն օր սուզվում եմ Թումանյանի աշխարհում. թող Թումանյանը մեզ առաջ տանի, թող մեզ կապի գրքի հետ, որովհետև Թումանյանը երբեք չի հնանում, նա միշտ արդիական է»,-ասաց պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը՝ խոսքն ամփոփելով Հրանտ Մաթևոսյանի խոսքերով՝ Թումանյանով մենք կանք, առանց Թումանյանի մենք չկանք:

Ելույթ ունեցան պատմաբան Միեր Հարությունյանը և Արամ Գրիգորյանը:

Միեր Գրիգորյանը խոսեց Շուշիում

ստեղծված «Կաճառ» գիտական կենտրոնի մասին, որի նպատակը հայ մշակութային արժեքների տարածումն ու հանրահռչակումն էր, ապա շնորհավորեց գիրք նվիրելու տոնի առթիվ՝ վստահեցնելով, որ մեկ օր գրքի վերաիմաստավորման շնորհիվ զարթոնք ենք ապրելու:

ՀՊՄՀ շրջանավարտ Արամ Գրիգորյանը թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանի հորդորով իր հոր գրադարանից ավելի քան 100 գիրք նվիրել է համալսարանի գիտական գրադարանին: Նա խոսեց իր հոր սերնդի մասին, որ իրենց գործի նվիրյալներն էին և ստեղծեցին գրքեր, որով առաջ տարան մեր պատմագիտությունը:

«Օրը հիշարժան է. մենք սերտում ենք Ամենայն հայոց բանաստեղծի դասերը՝ հիշելով նրան Դսեղում, Թիֆլիսում, Էջմիածնում, Վանում». Աշոտ Գալստյանը մի դրվագ ներկայացրեց բանաստեղծի մարդասիրական արարքի մասին:

Պրոֆեսոր Աիդա Թոփուզյանը ևս խոսեց գրքի կարևորության ու արժեքի մասին՝ փաստելով՝ հարուստ է այն մարդը, որը հանարավորություն է ունեցել և շփվել է գրքի հետ: «Եթե ուզում ես իմանալ, թե ազգը ինչ մակարդակ ունի, նայում ես, թե այդ ազգը ինչքան է կարդում»: Մենք Թումանյանով ենք մեր լեզուն սովորել, Թումանյանով ենք մեր պատմությունը զգացել, մենք Թումանյանի օրինակով ենք մեծացել:

Աիդա Թոփուզյանը վստահ է. «Որքան մենք կարողանանք մեր սերն ու հավատարմությունը գրքի նկատմամբ փոխանցել երիտասարդ սերունդներն, այնքան ավելի կշահենք, որովհետև գիրքը հարստացնում է մեր մայրենի լեզուն ու մեր գիտելիքները»:

Օրն ամփոփեցին Բանասիրական ֆակուլտետի ուսանողները, որոնք «երկխոսություն վարեցին» մեծն Թումանյանի հետ: Իսկ Աբովյանի անվան հմ. 2 հիմնական դպրոցի 6 գ դասարանի աշակերտները ՝ ուսուցչուհի Աննա Ղազարյանի սաները, ասմունքեցին Թումանյանի ստեղծագործություններից և Մայրենի լեզվի մասին երգ կատարեցին:

Գիրք նվիրելու օրը Մանկավարժական համալսարանում յուրահատուկ խորհուրդ ուներ՝ Թումանյանի դասերը սերտելու և նորովի վերաիմաստավորելու խորհուրդ:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ

ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյանը փետրվարի 24-ին Մանկավարժական համալսարանում անցկացրեց աշխատաժողով, որտեղ քննարկեցին կրթական ծրագրերի վերանայման ու ներքին աուդիտին վերաբերող հարցեր:

Ռուբեն Թոփչյանը վստահեցրեց՝ մեր բոլոր կրթական ծրագրերը պետք է համապատասխանեցնենք եվրոպական չափանիշներին, ըստ այդմ վերանայվի, ուսումնասիրվեն ու դիտարկվեն դրանց կիրառման արդյունավետությունը:

Որակի գործընթացների վերաբերյալ աշխատանքային քննարկման ընթացքում գործնական խոսակցություն ծավալվեց ներքին աուդիտի հարցադրումների շուրջ, ՈԱԱԿ ղեկավարը փաստեց՝ խնդիրները պետք է այնպես դրվեն, որ արտահայտեն վերջնարդյունքները, բայց շատ հաճախ խնդիրը և գնահատման չափանիշները չեն համապատասխանում իրար: Քննարկման առանցքի հիմնական հարցադրումն էր, թե համալսարանը կարող է երաշխավորել շրջանավարտի մի շարք որակներ, որոնք ապահովելու են նրա նկարագիրը դպրոցում:

Ռ. Թոփչյանը ներկայացրեց աուդիտի իրականացման ճանապարհային քարտեզը, խոսեց համակարգի չափելիության և վերջնարդյուքների գնահատման մասին, կարևորեց, որ որակի կենտրոնը օգտվի արտաքին ու ներքին տվյալների աղբյուրներից՝ հավելելով՝ որակի ապահովումը գործընթացի դրդում է՝ միտված բարելավմանը: Քննարկման կարգախոսն էր՝ հաշվետվությունից դեպի ռազմավարական մտածելակերպ: Առաջարկություն եղավ պարբերական մոդելն իրականացնել վերանայման երեքամյա շրջափուլով:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը լիահույս է՝ հաջողության հասնելու համար կսկսեն գործողությունների հաջորդական պլան կազմելուց, խնդիրները կքարտեզագրեն՝ հասկանալու համար լուծումները: Լիլիթ Մկրտչյանը կարևորեց համատեղ աշխատանքի միջոցով գործընթացը վերանայելու ուղենիշները՝ արդյունքում ունենալու ժամանակակից ու մրցունակ կրթական ծրագրեր:

Քննարկումն անցավ ակտիվ հարց ու պատասխանով, Ռուբեն Թոփչյանն անդրադարձավ ՀՊՄՀ Որակի բաժնի ղեկավար Անի Հակոբյանի և մի շարք դասախոսների հարցադրումներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԱՐԵՎՄԱՏԱՀԱՅ ԼԵԶՈՒՆ ԱՊՐԵՑՆԵԼՈՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

ՀՊՄՀ «Սփյուռք» կենտրոնի հետ մեծ մտավորական, «Մարմարա» թերթի երկարամյա խմբագիր, «Առաստաղ» երկհատոր վեպի հեղինակ Ռոպեր Հատտեճյանի շփումները Մանկավարժական համալսարանում նշանավորեցին՝ տոնելով նրա 100-ամյակը:

Հանդիպումը համատեղ նախաձեռնել էին ՀՊՄՀ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը և Համազգային հայ կրթական-մշակութային միության Երևանի գրասենյակը:

Հանդիպմանը ներկա էին համալսարանի ղեկավար կազմը, դասախոսներ և ուսանողներ, ԵՊՀ գրականագետներ:

«80 տարի առաջ Ռոպեր Հատտեճյանը մի հետաքրքիր միտք արատահայտեց, երբ իր թրքերեն պատմվածքը թարգմանեցին հայերեն և տպագրեցին հայկական ամսագրում. «Չեմ գիտեր՝ ինչ շահեցավ հայ գրականությունը, բայց ես շահեցա հայ գրականությունը». այսօր ուզում ենք ասել՝ հայ գրականությունն է, որ շահել է իրենով, և մենք երախտապարտ ենք, որ հեռավոր Բոսֆորի ափին նա կարողացել է մեր սիրտը մտնել՝ հայ գրականությանն իր ավանդը բերելով,-ասաց ՀՊՄՀ «Սփյուռք» կենտրոնի տնօրեն Քնարիկ Աբրահամյանը: -Այսօր մեր երախտագիտությունն ենք հայտնում հայ մշակույթը Պոլսում պահելու նրա ջանքին ու նվիրումին»:

«Շատ պատվաբեր է մեր բուհի համար, որ անդրադարձ ենք անում այս կարևոր իրադարձությանը և շատ կարևոր մարդու, որը գրականագիտական հասարակական գործունեություն է ծավալել՝ թողնելով մեծ ժառանգություն: Նա ինձ համար այն մարդկանցից մեկն է, որն իր օրինակով ցույց տվեց՝ դու շարունակում ես հավատարիմ մնալ քո ինքնությանը, լեզվին, և Պոլսում դարձավ մի նոր մտքի ջատագով:

Համալսարանն ինձ համար կրթական միջավայր է, որտեղ հիշում են, վերապրում են, պարտավորվում են անդրադառնալ ինքնությանն ուղղված գործունեություն իրականացրած այդ կարևոր հենասյուներից մեկին: Նա թույլ է տալիս, որ մենք վերարժևորենք մեր ունեցածը ու առաջ ընթանանք: Այդ ամենը մեր ինքնության մի մասն է»,- ասաց ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը:

Համազգային հայ կրթական և մշակութային միության Երևանի գրասենյակի տնօրեն Ռուզան Առաքելյանն անդրադարձավ պոլսահայ գրողին ու մտավորականին, որն իր ամբողջ կյանքը նվիրել է հայ գրականությանն ու հայ ժողովրդին. «Պոլսահայ գրականությունը ես սփյուռքահայ չեմ անվանում, որովհետև հայերն այդտեղ ավելի վաղ ժամանակներից են ապրում, քան թուրքերը,-ասաց նա: -Ցավոք Հատտեճյանը որպես գրող քիչ է ճանաչվել սփյուռքում, բայց նրա գրական ժառանգությունը մեր գրականության լավագույն էջերից է, հուսով եմ՝ առաջիկայում գրականագիտությունը լրջորեն զբաղվելու է նրա գրականությամբ»:

ՀՊՄՀ պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը 1996 թվականին հրատարակել է «Ներաշխարհի գեղարվեստական քննություն. Ռոպեր Հատտեճյան» մենագրությունը, իսկ 2006 թվականին «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը հրատարակել է «Առաստաղ և առաստաղի մյուս կողմը» գիրքը:

«Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի աշխատողների այցերը «Մարմարա» խմբագրատուն և մարդկային ու մասնագիտական շփումները փոխադարձ են եղել, և ՀՊՄՀ Հայ նոր գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը իրավացիորեն նկատեց. «Հատտեճյանը փոխեց մեր գրական մտածողությունը: Այսօր մենք խոսում ենք նրա «Առաստաղ» վեպի մասին՝ սիրով, «Մարմարա» թերթի մասին՝ ջերմությամբ: «Մարմարան» մշակութային կենտրոն էր, իսկ գրողի միակ երկհատոր վեպը խորհրդանշում է ոչ միայն սահման, այլ մեր շարունակականությունը»:

Պրոֆեսոր Դանիելյանը խոսեց արևմտահայ գրականության մերօրյա տագնապների ու անհանգստությունների մասին՝ հատտեճյանական հայացքի միջով նորից անդրադառնալով մեր արևմտահայ գրականությանն ու նրա ողբերգական էջերին:

Պրոֆեսորը հեղինակի «Առաստաղ» վեպն անվանեց մեր գրականության բարձունքը՝ ասելով՝ ովքե՞ր են գալու Հատտեճյանից հետո, ուզում ենք հավատալ մերօրյա գրական ստեղծագործական ներուժին:

Սուրեն Դանիելյանը նկատեց.«Արևելահայ և արևմտահայ գրականության մեջ մշտապես եղել է մրցակցություն, սակայն մեկ գրականություն, մեկ հայացք աշխարհին, մեր պատմությանը, մեր ողբերգականությանը, մեր ներուժին՝ սա է գլխավորը, և այս առումով Հատտեճյանը Խրախունու հետ միասին մնացին Պոլսի մեջ նորագուն շրջանի հզորագույն դեմքերը»:

Պրոֆեսորը հավատում է մեր երկու գրականությունների միասնությանը, վստահեցնում՝ արևմտահայ գրականությունը շարունակական է:

Ելույթ ունեցավ ԵՊՀ-ից բանասիրական գիտությունների դոկտոր Վազգեն Գաբրիելյանը, որը Հատտեճյանի կերպարը մեզանում ներկայացնելու ակունքներում է կանգնած. 1980-ական թվականներին Գեղամ Սևանի հետ ձեռնարկել են Սփյուռքի պոեզիայի և արձակի հատորների տպագրությունը, որտեղ զետեղել են նաև Հատտեճյանի պատմվածքները: Հատտեճյանը Վազգեն Գաբրիելյանի մեջ տպավորվել է իր չափազանց համեստությամբ, փոքր հասակով, բայց մեծ մտածողությամբ, իր մտածությունների լայնածիրությամբ:

«Նրա պես գրողներ մենք շատ ունենք, բայց որպես խմբագիր՝ նա բացառիկ էր: Ես չեմ ասում Հատտեճյանը «Մարմարան» խմբագրեց, ես ասում եմ՝ նա տևականացրեց, հզորացրեց «Մարմարան»»: Նա գրեց «Պտույտ մը գրականության կուլիսներուն մեջ». դա բացառիկ բան էր, այդպես նա ներկայացրեց հայ գրականությունը:

Համազգային հայ կրթական-մշակութային միության առանցքային դեմքերից Արտաշես Շահբազյանը խոսեց Մանկավարժականի հետ համագործակցության մասին, որը եղել է ի շահ գրականության:

«Թեև Հայաստանում նրան շատերը չգիտեին, բայց նա Հայաստանում գնահատվել է, Հայաստանով ապրել է, Հայաստանը իրեն ճանաչել է, եղել է ՀԳՄ անդամ,-ասաց նա: -Իր և իր սերնդակիցների շնորհիվ Պոլսո կյանքը վերարթնացում ապրեց՝ փաստելու համար, որ հայկական Պոլիսը ոչնչացված չէ: Իր 100-ամյա կյանքով նա նաև որոշակիորեն խորհրդանշում է Պոլսի ազգային-մշակութային կյանքը, «Մարմարան» առանցքային դերակատարություն ունեցավ Պոլսի ազգային կյանքում՝ Հատտեճյանի անհավակնոտ մարդկային կերպարի շուրջը համախմբելով հայ մտավորականներին»:

Հատտեճյանի գործը պետք է շարունակել՝ նրա ստեղծագործությունները հրատարակելով, արևմտահայ լեզուն ապրեցնելու շարունակականությամբ՝ ամփոփեց բանախոսը:

ԵՊՀ սփյուռքահայ մասնագետներից Արծրուն Ավագյանն ընդգծեց՝ մեծերն իրենց ապրած տարիներով չեն ավարտում իրենց կյանքը, մշակույթի գործիչների ու գրողների կյանքը սկսվում է նրանցից հետո: Ռոպեր Հատտեճյանը այն քչերից մեկն է, ով պոլսահայ գաղութում մշակութային կյանքը պահողներից ու շարունակողներից եղավ: «Իր վեպում նա ասում է՝ պատերը գուցե կանգուն են, բայց առաստաղը փլվում է... Ցավոք, այդ առաստաղը փլվում է ոչ միայն Պոլսում, այլև սփյուռքահայ բոլոր գաղութներում...»:

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանն անդրադարձավ պոլսահայ մամուլին. սփյուռքահայ իրականությունը հնարավոր չէ պատկերացնել առանց մամուլի, որը հասարակական-քաղաքական արժեքներ, հանրային գաղափարախոսական պայքար է ձևավորում:

Հատտեճյանի գրական կերպարին ու մտավորականի անհատականությանն անդրադարձ արեց ԵՊՀ գրականագետ Սամվել Մուրադյանը՝ ասելով նա մեծ գրական երևույթ էր: Պարոնյանի նման Հատեճճյանն էլ մահվան դեմ կռիվ ուներ, հաղթել էր մահին, և հաղթել էր ոչ միայն իր անձնական կռվով, իր ստեղծագործությամբ, իր հայապահպան գործունեությամբ, պոլսահայ գրականության ծառը կանաչ պահելու հավերժական խորհրդով, այլև նրա ստեղծագործությունը սերունդների հիշողության մեջ ամենուրեք արժևորելու, գիտականորեն հետազոտելու մեր պատրաստակամությամբ:

Ռոպեր Հատտեճյանը մեր բազմադարյան միասնական անհիշելի ժամանակներից՝ նախագրային շրջանից եկող հայ գրականության մասնիկն է, մեր ժամանակներում իր գրական-գեղարվեստական մեծ աշխարհը կառուցած հզոր անհատականություն, որը կարողացել է հաղթել մահին և ներկա լինել այս և հետագա բոլոր դահլիճներում:

Հանդիսությունն ամփոփվեց բ.գ.թ., դոկտոր Պետրոս Դեմիրճյանի, բ.գ.թ., դոցենտ Վալերի Փիլոյանի, դերասան, ռեժիսոր Արամ Կոստանյանի, բ,գ,թ, Մանուշ Բալայանի և ՀՊՄՀ շրջանավարտ, պոլսահայ Պետրոս Չափքեանի ելույթներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ԵՍ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԵՄ ՄԵՐ ԼԵԶՎԻ ՀԱՆԴԵՊ ԱԲՈՎՅԱՆԱԿԱՆ ՍԻՐՈ ՀՈՐԴՈՐԻՆ.

ԼԻԼԻԹ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լիլիթ Աշոտի Տեր-Գրիգորյան
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

-Տիկին Տեր-Գրիգորյան, ինչ զգացողություններ է առաջացնում Մայրենի լեզվի օրը, որն է տոնի խորհուրդը:

-Որևէ տոն իմաստ ունի, եթե հանրության կողմից կա այդ տոնի բովանդակության լիակատար ընկալում, արժևորում ժամանակի մեջ և տվյալ պահին, ինչպես նաև՝ համապատասխան ազգային քաղաքականություն: Մինչդեռ մեզանում Մայրենի լեզվի օրը, իմ կարծիքով, մի տեսակ ձևական բնույթ է կրում. այդ օրը ներբողներ են ձոնվում հայոց լեզվին, իսկ հաջորդ օրվանից հայոց լեզվի՝ հայի համար ինքնութենական ու գոյութենական արժեքը մնում է լուսանցքից դուրս՝ առանձին անհատների (որոնք իրականում շատ են) պատասխանատվության և իրենց առաքելության գիտակցման ու կատարման շրջանակում միայն: Մինչդեռ հայոց լեզվի, որպես հայ երեխայի և հայ ազգի գոյության և հարատևության կարևորագույն գրավականի դերն այսօր ոչ միայն պետք է գիտակցվի, այլև դառնա ազգային համընդհանուր լեզվաքաղաքականության ամենօրյա հետևողական իրականացումը կրթական (և ոչ միայն կրթական) բոլոր ուղղություններով՝ նախադպրոցական, դպրոցական, բուհական, մշակութային... Հայոց լեզուն պետք է սիրել ու սիրել տալ, սովորել ու սովորեցնել, պահպանել ու պաշտպանել ամեն օր: Եվ Տոնը կդառնա այս ամենի խտացումը, այնպիսի տոն, ինչպիսին եղավ 405 թվականին, երբ Մեսրոպ Մաշտոցը Վաղարշապատ վերադարձավ հայերեն գրերով... երբ կար համազգային միասնական գիտակցություն...

-Ինչպիսին է ներկա ժամանակներում Մայրենիի ուսուցման դրվածքը տարրական օղակում: Ինչ է փոխվել:

-Այսօր լեզվական գիտելիքը, ցավոք, տարրական օղակում հասցվել է նվազագույնի, ինչը չափազանց մտահոգիչ է, որովհետև չկա լեզվական կարողություն՝ առանց լեզվական գիտելիքի: Լեզվական գիտելիքը լեզվամտածողության ձևավորման կարևոր հիմքն է, քանի որ լեզուն մտածողության ձևավորման, մտքերի կառուցման, վերլուծության և արտահայտման հիմնական միջոցն է: Որքան լավ է տիրապետում մարդը լեզվին, այնքան ավելի տրամաբանական, հստակ և ճշգրիտ է դառնում նրա մտածողությունը, որովհետև լեզուն հնարավորություն է տալիս իր կառույցների ու կանոնների միջոցով մշակելու և ձևավորելու մտքերը: Մեր ժամանակներում գիտությունը կրտսեր դպրոցականների լեզվամտածողության ձևավորումը դիտարկում է որպես անհատի ձևավորման որակական հիմք: Մայրենի լեզուն նաև մարդու ազգային հոգեկերտվածքի արտահայտությունն է, ժողովրդի իմաստության ու կենսափիլիսոփայության շտեմարանը, ուստի հայոց լեզվի ուսուցումը պետք է համակարգված, գիտական ու գիտակցական լինի՝ ուսուցման առաջին օրվանից սկսած՝ անպայմանորեն հիմնված հայի հոգեկերտվածքով անհատի ձևավորման նպատակի վրա: Կարծում ենք մայրենի լեզվի տարրական ուսուցման մոտեցումներում այս շեշտադրումները պետք է նկատի առնվեն:

-Բարձր տեխնոլոգիաների և անգլերենի դարաշրջանում, երբ համացանցն առաջնային դեր ունի, մայրենի լեզուն անտեսվում է շատ օգտատերերի կողմից, ես կասեի՝ ոտնահարվում: Ինչ պետք է անել:

-Դրական նկատելի արդյունք ունենալու համար, կարծում ենք, պետք է բարձրացնել հայ մարդու (առայժմ գոնե դպրոցականների և երիտասարդների) գիտակցական մակարդակը, ինչը երկարատև համակարգային ու համընդգրկուն մոտեցում է պահանջում: Առանձին նվիրյալների մասնավոր ձեռնարկումները չեն կարող ցանկալի՝ նշանակալի արդյունքը տալ, որովհետև դրանք գործում են՝ մնալով միայն անհրաժեշտ գիտակցականություն ունեցողների շրջանակում: Բայց նախանձախնդիր մարդիկ, միևնույն է, անում են իրենց կարեցածը, ինչը շատշատ կարևոր է:

Այսօր մի նոր մարտահրավեր է երևան եկել՝ արհեստական բանականությունը, որը մեծագույն վնաս կարող է հասցնել նոր սերնդի կողմից հայոց լեզվի ուսուցման, հայերեն լեզվամտածողության ձևավորման գործընթացին, և անհրաժեշտ է ժամ առաջ գնահատել այդ վտանգները տարբեր տարիքային խմբերի համար և կանխարգելիչ միջոցների համալիր մշակել, այլապես վտանգված ենք՝ ունենալու ծույլ միտք ունեցող, հայերեն մտածելու և ինքնուրույնաբար գեղեցիկ ու գրագետ խոսք կառուցելու շատ թույլ կարողություններ ունեցող սերունդ: Արհեստական բանականությունից պետք է ճիշտ օգտվել սովորեցնել:

-Որո՞նք են Մայրենին անաղարտ պահելու հիմնական ուղերձները: Ինչպե՞ս դիմակայել մարտահրավերներին:

-Հայ սերնդի կրթադաստիարակչական մակարդակը բարձրացնելով՝ այդ կերպ սերունդների մեջ սեր և ակնածանք, պատասխանատվության և նախանձախնդրության զգացում ներարկելով հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության և հայկական մշակույթի նկատմամբ ընդհանրապես:

-Լեզուն յուրաքանչյուր ազգի ինքնության գրավականն է: Արդյո՞ք դա այսօր բոլորն են գիտակցում:

-Ամիսներ առաջ Միխայիլ Շվիդկոյի «Ագորա» հաղորդման ժամանակ հնչեց այն միտքը, որ մարդկության էվոլյուցիան՝ նրա զարգացումն ու փոփոխությունը, բոլոր ժամանակներում մեկ հարցի մասին է եղել՝ ինչը պետք է այդ գործընթացում պահել և փոխանցել սերունդներին: Եվ այսօր շատ ժողովուրդներ փորձում են ճանաչել ու սահմանել իրենց ինքնությունը՝ 21-րդ դարի հարափոփոխ ու խառնիճաղանջ աշխարհում չկորչելու և իրենց դեմքը պահպանելու համար:

Հայերս գիտենք՝ որոնք են մեր ինքնության երկու հիմնասյուները՝ հայոց լեզուն և հավատը, և դրանք պետք է կանգուն պահենք, դրանց հետևենք, դրանք փոխանցենք մեր սերունդներին: Պատմությունը դա վաղուց ապացուցել է:

-Ինչ կմաղթեք այն ուսանողներին, որոնց ամենօրյա ոտնձգությունները աղավաղում են մեր ոսկեղենիկ հայերենը, լեզու, որի մասին այնքան բարձր են արտահայտվել շատ օտարազգի մտածողներ:

-Մաղթանքի համար կընտրեմ Խաչատուր Աբովյանի խոսքերը, որոնք 200 տարի հետո էլ գաղափարական և հուզական նույն հագեցվածությունն ունեն. «Ա՜խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չլինի, մարդ ինչի՞ նման կլինի: Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հավատը: Լեզուդ փոխի՞ր, հավատդ ուրացի՞ր, էլ ինչո՞վ կարես ասել, թե ո՞ր ազգիցն ես... Ձե՜զ եմ ասում ձե՜զ, հայոց նորահաս երիտասարդք՝ ձեր անունին մեռնե՜մ, ձեր արևին ղուրբա՜ն, տասը լեզու սովորեցե՜ք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայի՜մ բռնեցեք»:

Որպես Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի սան և դասախոս՝ ես ինքս էլ հավատարիմ եմ սիրո այս հորդորին:

Զրույցը Սիլվա ԱՍՐՅԱՆԻ

ՍԵՄԻՆԱՐ՝ «ԿԱՐԻԵՐԱՅԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»՝ ԽՈՐԱԳՐՈՎ

Մանկավարժական համալսարանում փետրվարի 20-ին Պրակտիկայի և կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ մեկնարկեց «Կարիերայի ճարտարապետություն. ինքնությունից դեպի ռազմավարություն» խորագրով չորսամսյա սեմինարների շարքը: Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ու Սկզբնական կրթության ֆակուլտետների բակալավրիատի ուսանողներին կենտրոնի ղեկավար Հասմիկ Առաքելյանը ներկայացրեց կարիերայի պլանավորման, աշխատաշուկայի միտումները, խոսեց զբաղվածության հնարավորությունների մասին:

Կենտրոնի ղեկավարը կարևորեց նման հանդիպումները՝ ուսանողներին աշխատաշուկայի ու զբաղվածության միտումների մասին իրազեկելու տեսանկյունից և վստահեցրեց՝ նման հանդիպումները շարունակական կլինեն:

Կենտրոնի մասնագետ Ալլա Եփրեյանը ներկայացրեց «Կարիերայի նոր մտածողություն. մասնագիտությունից դեպի հմտություններ» առաջին մոդուլը՝ հնչեցնելով հռետորական միտք՝ կարիերան գուցե ընդհանրապես մասնագիտության մասին չէ...Ապա շարունակեց՝ կարիերայի դասական մոդելն իրեն սպառել է՝ սովորում ես մասնագիտություն, գտնում աշխատանք, աշխատում ամբողջ կյանքդ: Նա ընդգծեց՝ կյանքի տարբեր փուլերում հնարավոր է վերաիմաստավորել մասնագիտության դերը:

Ինտերակտիվ ձևաչափով անցկացված անդրանիկ հանդիպման ընթացքում գործնական խոսակցություն ծավալվեց հմտությունների, ինքնակառավարվող կարիերայի, «սահմանների քայքայման», ժամանակակից աշխատաշուկայում հայտնի «աշխատունակություն» տեսության շուրջ:

«Սեփական կարողությունները լավ ներկայացնելը ռազմավարական հմտություն է, ինչը մեզանում հաճախ է թերագնահատվում»,-ասաց բանախոսը՝ վստահեցնելով՝ հաջորդ մոդուլում կսկսեն կառուցել մասնագիտական ինքնությունն արդեն նոր մտածողության հիմքի վրա՝ կարիերան կառուցել ոչ թե մասնագիտությունից, այլ հմտություններից:

ՈՒԽ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

Տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի Ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովը 350 պատվիրակների մասնակցությամբ: Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանն ամփոփ ներկայացրեց իրականացված ուսանողական ծրագրերի հաշվետվությունը՝ ըստ ֆակուլտետների, գործող հանձնաժողովների և մասնակցած ուսանողների թվաքանակի: Իրականացված նախաձեռնությունները խոսուն էին՝ թե՛ բովանդակային, թե՛ ուսանողների մասնակցության տեսանկյունից:

Ուսանողական կառույցի ղեկավարը շնորհակալություն հայտնեց նախաձեռնությունների հեղինակներին ու ակտիվ մասնակիցներին և փաստեց, որ Ուսանողական խորհուրդը հասարակական կարգով ունի 153 հաստիք, որը կազմում է ուսանողական ակտիվի հիմնական կորիզը:

Պարույր Գալստյանը խոսեց խորհրդի նոր լոգոյի մասին, որի հեղինակ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահ Մոնիկա Պողոսյանը վստահեցրեց՝ նոր լոգոն իր գրաֆիկական լուծումներով կդառնա ուսանողական նոր սերնդի հաջողության և միասնականության խորհրդանիշը: Քննարկման արդյունքում որոշեցին ՈՒԽ նոր լոգոն փորձնական կիրառության մեջ դնել:

Միաժամանակ տրվեց կիսամյակային նոր ծրագրերի մեկնարկը: Պ. Գալստյանը ուսանողներին ներկայացրեց «Լավագույն ուսանող», «Մասնագիտական կողմնորոշում», «Ուսանողական գարուն» ամենամյա երեք մեծ ծրագրերը, որոնք պետք է իրականացնեն առաջիկա ամիսներին:

ՈՒԽ փոխնախագահ Ֆելիքս Բախչինյանը հանգամանորեն խոսեց «Ուսանողական գարուն» միջոցառման անցկացման մասին՝ ծրագիրը

ներկայացնելով մասնակիցների հաստատմանը:

Առջևում ուսանողական ակտիվ նախաձեռնությունների իրականացման շրջանն է, և համալսարանի ուսանողները ուսումնական գործընթացները մեծ պատասխանատվությամբ կիարստացնեն նոր ու հետաքրքիր միջոցառումների կազմակերպմամբ՝ ուսանողական տարիները դարձնելով կյանքի լավագույն ու հիշարժան մասը:

Գիրքը երեխայի լավագույն ընկերն է

Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին, որը Հայաստանում նշվում է նաև որպես Գիրք նվիրելու օր, վերածվեց գրքի և սիրո իսկական տոնի: Այս գեղեցիկ օրվա շրջանակում Սկզբնական կրթության ֆակուլտետը հյուրընկալեց ՀՊՄՀ N 57 դպրոցի առաջին դասարանցիներին՝ ստեղծելով ջերմ, հեքիաթային և հիշարժան միջավայր:

Ֆակուլտետի ուսանողները փոքրիկների համար պատրաստել էին հաճելի անակնկալ. նրանք նվիրեցին սիրելի գրողի՝ Հովհաննես Թումանյանի հեքիաթների գրքերից՝ երեխաներին փոխանցելով ոչ միայն գիրք, այլև արժեք, մշակույթ և սեր ընթերցանության հանդեպ: Թումանյանի հեքիաթները, որոնք սերնդեսերունդ ուղեկցում են հայ մանուկներին, լի են բարոյական պատգամներով, մարդասիրությամբ, արդարության ու բարության գաղափարներով:

Գիրքը փոքր տարիքից երեխայի լավագույն ընկերն է: Այն զարգացնում է երևակայությունը, հարստացնում բառապաշարը, ձևավորում մտածողությունը և նպաստում խոսքի մշակույթի զարգացմանը: Առաջին դասարանը այն կարևոր փուլն է, երբ երեխան նոր է մտնում կրթական աշխարհ, և հենց այս շրջանում ընթերցանության հանդեպ սերը կարող է դառնալ նրա հետագա ուսումնական հաջողությունների հիմքը: Երբ երեխան գիրք է ստանում որպես նվեր, նրա մոտ ձևավորվում է գիտակցում, որ գիրքը արժեք է, ուշադրության և սիրո արտահայտություն:

Գիրք նվիրելու օրը ևս մեկ հնարավորություն է հիշեցնելու, որ թվային դարաշրջանում գիրքը շարունակում է մնալ կրթության, ինքնաճանաչման և հոգևոր զարգացման կարևորագույն միջոց: Փոքրիկների համար Թումանյանի հեքիաթները ոչ միայն հետաքրքիր պատմություններ են, այլև կյանքի առաջին դասերը՝ ընկերության, ազնվության, աշխատասիրության և հայրենասիրության մասին:

Այս նախաձեռնությունը դարձավ գեղեցիկ օրինակ այն բանի, թե ինչպես կարելի է ուսանողների և դպրոցականների միջև ստեղծել արժեքային կապ՝ գրքի միջոցով: Նման միջոցառումները նպաստում են ոչ միայն ընթերցանության խթանմանը, այլև ազգային մշակութային ժառանգության պահպանմանը և փոխանցմանը սերունդներին:

Արուս Այվազյան,
Սկզբնական կրթության ֆակուլտետ
Մագիստրատուրայի 1-ին կուրս

ԱՐԺԵՎՈՐԵՑԻՆ ՕՐՎԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Փետրվարի 19-ը յուրահատուկ էր Գեղարվեստական կրթության ֆակուլտետում. Գիրք նվիրելու տոնի առթիվ ֆակուլտետը հյուրընկալել էր բուհի Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի «Կերպարվեստ և դեկորատիվ կիրառական արվեստ բաժնում սովորող աշակերտներին՝ համատեղ նշանավորելու օրվա խորհուրդը:

«Աշխարհի որ անկյունում էլ լինենք՝ արվեստի լեզուն մեկն է»,-ասաց դեկան Արա Հակոբյանը՝ արվեստի միջավայրում ներկայացնելով ֆակուլտետի 7 մասնագիտություններ: Դեկանը խոսեց գրքի ստեղծման ու ավանդույթների մասին, միաժամանակ ընդգծեց՝ դրա հիմքում ևս արվեստն է, քանզի պատկերազարդումները ևս մշակութային արժեք են:

Տոնի առթիվ Լևոն Կոջոյանի անվան ցուցասրահում բացված ցուցադրությունը խոսուն վկան էր այն բանի, որ ֆակուլտետում պատկերազարդում, գրքի ձևավորում են դասավանդում մեր հանրապետությունում այդ ոլորտի լավագույն մասնագետները. ներկայացվել էին ավանդական ու ժամանակակից միջոցներով պատրաստված գրքերի յուրօրինակ պատկերազարդումները՝ դասախոսների և ուսանողների հեղինակությամբ:

Մշակութային օրը բազմազան էր ու բազմաբնույթ. համալսարանի շրջանավարտ, Հենակետային (ավագ դպրոց) վարժարանի «Արվեստի պատմություն» առարկայի ուսուցիչ Արփինե Թորիկյանը աշակերտներին ներկայացրեց գրքի նկարազարդման էվոլյուցիան Հայաստանում՝ վաղ միջնադարյան ձեռագիր մատյաններից մինչև ժամանակակից թվային լուծումներով ստեղծված տարբերակներ: Տոնն ամփոփվեց ավագ դպրոցի սովորողների համար անցկացված վարպետաց դասերով, ֆակուլտետի արվեստանոցներում շրջայցով, ապա վարժարանականները տեղում ծանոթացան լինոփորագրությանը և որպես հուշ՝ իրենց հետ տարան լինոփորագրությամբ արված Թումանյանի դիմանկարը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկական կրթամշակութային միջավայրում

«Տաթև Լուսարձակ» հայկական կենտրոնը հիմնադրվել է Մոսկվայում 2019 թվականին. այն առ այսօր գործում է Մոսկվայում և հարակից քաղաքներում: Այստեղ սովորում են 2-70 տարեկան հայեր և այլ ազգության ներկայացուցիչներ:

Կենտրոնն իր գործունեության ընթացքում ստացել է չորս շքանշան և բազմաթիվ պատվոգրեր: «Լուսարձակ»-ի ուսուցիչները մասնակցում են ԿԳՄՍ-ի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, իսկ աշակերտները տարբեր մրցույթներում մշտապես զբաղեցնում են առաջին հորիզոնականներ:

Դպրոցում երեխաները սովորում են հայ ժողովրդի պատմություն և գրականություն, ծանոթանում են թատերական արվեստին ու հայ կինոյին:

Կենտրոնում հինգշաբթի օրերին գործում է նաև «Նոր Վերնատուն» գրական խմբակը, «Լուսարձակ» երգի և պարի խումբ, «Վարպետ Բզեզ» ինքնագործ թատրոն: Այն հայկական կրթամշակութային փոքրիկ կղզյակ է, ուր տոնում են հայկական բոլոր տոները՝ երկար տարիների փորձ ունեցող մանկավարժների ղեկավարությամբ:

«Տաթև Լուսարձակ» կենտրոն հաճախում են նաև ազգությամբ ռուս երեխաներ, որոնք մեծ սիրով ծանոթանում են հայ մշակույթին: Կենտրոնում բացվել է 60 տարեկանից բարձր մեծահասակների խումբ, որոնք կենտրոն են հաճախում՝ սովորելու հայերեն տառերը:

Այստեղ աշխատանքային են գրեթե բոլոր օրերը, և օրեցօր ամրագրվում են հաջողություններ՝ առաջին մրցանակ Մոսկվայում կայացած շարադրությունների, վայելչագրության, «Թումանյանն ու մենք», «Թույլ օղակ» մրցույթներում:

2025 թվականի հունիսի 9-ին կենտրոնը պարգևատրվել է Հովհաննես Թումանյանի թանգարանի կողմից. այդ օրը կենտրոնի հյուրն էր նաև Հովհաննես Թումանյանի ծոռնուհին:

Կենտրոնի տնօրեն Տաթև Մաղաքյանից տեղեկանում ենք, որ կենտրոնն աշխատում է նաև որպես քաղաքային ճամբար, որտեղ հաճախ են կազմակերպվում վարպետաց դասեր. երեխաները ծանոթանում են կավագործությանը, գորգագործությանն ու նկարչությանը:

Հրաշալի է, որ հայրենիքից դուրս ապրող տարբեր տարիքի հայերին կա միավորող կենտրոն, ուր ամեն օրը կրթական-մշակութային տոնի է վերածվում՝ հայապահպանության միասնական գաղափարի շուրջ համախմբելով ոչ միայն հայերի:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՐԵԼԱՁԵՎ Է, ՍՐԲԱԶԱՆ ՊԱՐՏՔ

Ես Ռուբենն եմ ու Գորիսի դիրքապահ զորամասից մի քանի օր առաջ եմ զորացրվել: Ծառայությանն երկու տարում շատ բան եմ սովորել ու արժևորել, իսկ հիմա փորձում եմ ընտելանալ ու ներգրավվել քաղաքացիական կյանքին, վերհիշել ուսման մեջ ստացած գիտելիքներս:

Երկու տարին որքան էլ թվա դանդաղ ու դժվար, ամեն դեպքում այն, ի վերջո, ստվերում է կյանքի մի փոքր մաս, որից սովորում ես կյանքն ապրելու հիմունքները, որոշումներիդ մեջ դառնում առավել հաստատուն:

Ծառայությունը ապրելաձև է՝ որտեղ կան առօրյա պարտականություններ, կատարողական խնդիրներ, և դրանց արագ լուծումը մի գաղափարի մեջ է՝ հայոց պետականության պաշտպանման սրբազան պարտք: Այս գիտակցումն ինձ օգնեց հմտանալ, կոփվել, դիմադրել ցանկացած դժվարության և, իհարկե, ձեռք բերել գաղափարակից ու ազգային նվիրումով զինակից ընկերներ: Ընկերներ, որոնց հետ կիսում ես երկու տարվա պատմություն ու հետո ապրում մի ամբողջ կյանք:

Բանակում Նժդեհի էի կարդում ու առհասարակ պետք է Նժդեհի կարդալ: Մի ուրախ օր գտա զինվոր տեսակի «սահմանումը» ու հասկացա, որ սա հենց զինվորի ու հայ զինվորի բնութագիրն է՝ «Զինվորը չի խարխափում երբեք. նա կամ քաջաբար կռվում է կամ էլ դասալքում: Զինվորի համար ճշմարիտ է միայն այն դավանանքը, որը նրան բարոյական ուժ և արիություն է տալիս կռվելու և կարիքի դեպքում մեռնելու հայրենի երկրի համար»:

Այս տողերը յուրաքանչյուրի գիտակցումն է պետական սահմանի պաշտպանության ընթացքում, յուրաքանչյուրի նվիրումը՝ մարտական դիրքի ամրացման գործում:

Առիթը օգտագործելով՝ պիտի շնորհակալություն հայտնեմ այս գաղափարները կիսող մարդուն՝ տիկին Քնարիկին, որը զորամասի գրադարանում մայրական ջերմությամբ ընդունում էր մեզ և խորհրդածում՝ ամրապնդելով հայրենասերի ոգին:

Զորացրվելուց հետո պարտականությունները շատացել են, և առաջինը թիկունքի ամրացումն է, իսկ իմ դեպքում՝ ազգային մշակույթի պահպանումը:

Ես շնորհակալ եմ երկրի առաջին գծում կանգնած յուրաքանչյուր առաջամարտիկին, որը թույլ է տալիս ապրել ու շենացնել մեր երկիրը: Ձեզ ուժ ու կորով խաղաղության պահպանման գործում, տղերք:

Ռուբեն Խալափյան
ՀՊՄՀ ռեժիսուրայի բաժնի 1-ին կուրս

Մայրենիի օրը համալսարանական դպրոցում

Մեսրոպաշունչ, երկաթագիր հայոց տառեր,
Դուք մեր կյանքի, դուք մեր փառքի Մասիս սարեր,
Ջրեր անցաք, քռեր անցաք, դարձաք արև,
Ձեզնով մենք կանք ու կմնանք դար ու դարեր…

Համալսարանական № 57 հիմնական դպրոցում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված Մայրենի լեզվի օրվան: 5ա և 5բ դասարանների աշակերտները Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Ուրարտուհի Սահակյանի և Մերի Սեփոյանի ղեկավարությամբ օրը տոնի վերածեցին՝ երգ, պար, ասմունք, որոնք վերարժևորեցին օրվա խորհուրդը.

Արյունս եռման… Այդ իմ լեզուն է՝
Սուրբ ու մեսրոպյան ու ոսկեղենիկ.
Իմ երակներով անլուռ հոսում է,
Ծաղկում են լեզվում հող ու հայրենիք:
Փոխեցի՞ր լեզուդ՝ արյունն է փոխվում,
Քո երակների արյունը որդան.
Երբ հայերեն չէ քո սիրտը խփում,
Փլվում է սյունը հայրենական տան:

Միջոցառումը համեմվեց 5-9-րդ դասարանների աշակերտներից կազմված երգչախմբի կատարումներով, որը ղեկավարում էր դպրոցի երգերաժշտության ուսուցչուհի Ազնիվ Բարեղամյանը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ